ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ





2016
ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ





Հարգելի՛ համաքաղաքացիներ,

2016 թվականն ամփոփում ենք նոր և համարձակ նախաձեռնություններով, ծավալուն նախագծերով և քաղաքային կառավարման ոլորտում որոշումների կայացման գործընթացին մեր համաքաղաքացիների ակտիվ մասնակցությամբ: Տարվա ընթացքում իրականացված բոլոր աշխատանքները հնարավոր եղավ կյանքի կոչել միայն համատեղ ջանքերի և փոխադարձ վստահության շնորհիվ: Ավանդական դարձած այս հաշվետվության միջոցով նպատակ ունենք մեկ անգամ ևս ընդգծելու, որ մենք հաշվետու ենք մեր համաքաղաքացիներին:

Նախորդ տարիներին իրականացված ծրագրերն այս տարի համալրեցինք նոր և լայնամասշտաբ նախաձեռնություններով. բարեկարգեցինք այգիներ, պուրակներ, փողոցներ ու բակային տարածքներ, կառուցեցինք նոր խաղահրապարակներ ու ժամանցի վայրեր: Շարունակեցինք կարգի բերել ու ավելացնել քաղաքային լուսավորությունը, ոռոգման ցանցերը, ընդլայնել ընդհանուր օգտագործման կանաչ տարածքները, և, իհարկե, կարողացանք վերանորոգել շենքեր, կրթության, մշակույթի ու մարզական օջախներ:

Տարվա ընթացքում կատարված բոլոր աշխատանքների հիմքում եղել է և շարունակում է մնալ մայրաքաղաքի համաչափ զարգացումը, արժանավայել քաղաքային միջավայրի ապահովումն ու մեր սերունդներին կանաչ Երևան ժառանգելու տեսլականը: Ուրախալի է, որ քաղաքում կատարվող դրական փոփոխությունները մեր համաքաղաքացիների համար ոչ միայն ակնառու, այլև «սովորական» դարձան: Այսօր արդեն մեզանից ոչ ոք այլևս չի պատկերացնում քաղաքային միջավայրն ու առօրյան առանց այդ փոփոխությունների և զարգացումների:

Մայրաքաղաք Երևանի սիրելի՛ բնակիչներ, համոզվա՛ծ եմ, որ հաջորդող տարիներին ևս նույն նվիրումով, սրտացավությամբ և հետևողականությամբ մենք միասին շարունակելու ենք կյանքի կոչել իրատեսական ծրագրեր՝ ապահովելով մայրաքաղաքի կայուն զարգացումը:

Երևանի քաղաքապետ՝
ՏԱՐՈՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ



Նորք-Մարաշ վարչական շրջանի սիրելի՛ բնակիչներ,

2016 թվականը Նորք-Մարաշ վարչական շրջանի համար հաջողությունների և ձեռքբերումների տարի էր, քանզի ձեր անմիջական մասնակցությամբ իրականացվեցին բազմաթիվ ծրագրեր և նախաձեռնություններ, որոնք կարևոր նշանակություն ունեցան Նորք-Մարաշի զարգացման և բարելավման գործում: Եվ դա, նախ և առաջ, ձեր շնորհիվ, որ միշտ մեր կողքին եք ու անտարբեր չեք վարչական շրջանի անցուդարձի հանդեպ, գնահատում եք կատարված աշխատանքն ու մշտապես վարչական շրջանի աշխատակազմի բոլոր նախաձեռնությունների մասնակիցն եք: Այս ձեռնարկում ներկայացված են մեր ձեռքբերումները, կատարած աշխատանքն ու 2016 թվականի ընթացքում իրականացված ծրագրերը: Համոզված եմ, որ մենք միասին կպահպանենք արդեն ձեռք բերածն ու կշարունակենք իրագործել Նորք-Մարաշի հետագա զարգացմանն ու բարօրությանն ուղղված մեր բոլոր ծրագրերը:

Նորք-Մարաշ վարչական շրջանի ղեկավար՝
Վաղինակ Մկրտչյան

Վարչական շրջանի 4 հասցեներում 1 330 մ երկարությամբ լուսավորության ցանց է անցկացվել







Նորք-Մարաշ վարչական շրջանում իրականացվել են ընթացիկ վերանորոգման, փողոցների, մայթերի և բակերի ասֆալտապատման, սալիկապատման, թեքահարթակների կառուցման և լուսավորության ցանցի արդիականացման աշխատանքներ.

- ասֆալտապատում՝ **18 500 մ²**,
- սալիկապատում՝ **200 մ²**,
- թեքահարթակներ՝ **6 հատ**:

Հետիոտնային ճանապարհների կառուցում

- Կառուցվել է **70 գծմ** երկարությամբ Նորքի 5-րդ փողոցը և Նորքի 7-րդ փողոցը իրար կապող հետիոտնային անցումը,
- Ա. Արմենակյան 119 հասցեի դիմաց կառուցվել է հենապատ՝ **25 մ²**:







2016 թվականի ընթացքում Նորք-Մարաշ վարչական շրջանում կառուցվել է **390 գծմ** նոր ոռոգման ցանց, ընթացիկ նորոգման է ենթարկվել շուրջ **450 գծմ** ոռոգման ցանց:





Ծաղկային տարածքները կազմել են 1 հա

- տնկվել է շուրջ **15 000** ծաղկասածիլ,
- համաքաղաքային ծառատունկերի ժամանակ տնկվել է շուրջ **250** ծառ և **200** թուփ,
- պարբերաբար կրապատվել է շուրջ **250** ծառ,
- գարնան և աշնան աշխատանքների ընթացքում իրականացվել է շուրջ **150** վթարային ծառերի սանիտարական էտ:









Վարչական շրջանում կառուցվել է **մեկ** հասարակական նշանակության այգի՝ հ.122 մանկապարտեզի հարևանությամբ:





- Կառուցվել և տեղադրվել է թվով **3** նոր զրուցարան,
- տեղադրվել են թվով **10** նստարաններ:








ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ-ՆԵՐԻ ՀԵՏ

Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանը պարբերաբար համագործակցում է «Երևան Ջուր», «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Հայռուսգազարդ», «Երքաղլույս» ՓԲԸ-ների հետ:



Իրականացված մի շարք ծրագրեր կոչված են օժանդակելու սոցիալապես անապահով ընտանիքներին






Վարչական շրջանի թվով **60** սոցիալապես անապահով ընտանիքների դպրոցահասակ երեխաներ իրենց **20**-օրյա ամառային հանգիստն են անցկացրել Հանքավանի «Հեքիաթների կիրճ» ճամբարում:





Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար կազմակերպվել են տարաբնույթ էքսկուրսիաներ:





«Էրեբունի-Երևան 2798» տոնակատարության շրջանակում վարչական շրջանի **86** ընտանիքի հատկացվել է անհրաժեշտ կենցաղային տեխնիկա:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ









- Վարչական շրջանում բնակվող թվով 6 սիրիահայ ընտանիքներ պարբերաբար գտնվում են ուշադրության կենտրոնում,
- թվով 10 սոցիալապես անապահով միայնակ թոշակառուներ օգտվում են բարեգործական ճաշարանի ծառայություններից,
- թվով 18 սոցիալապես անապահով քաղաքացիների հատկացվել է պետպատվերի շրջանակներում անվճար բուժօգնության միջնորդագիր,
- թվով 140 սոցիալապես անապահով դպրոցահասակ երեխաների հատկացվել են դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ,
- ՀՀ սահմանամերձ և ԼՂՀ շրջաններում Նորք-Մարաշ վարչական շրջանի բնակիչ հանդիսացող թվով 19 ժամկետային զինծառայողների ծնողների համար կազմակերպվել է այցելություն և տեսակցություն զավակների հետ:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Երևանի քաղաքապետարանի թիվ 5 պոլիկլինիկա ՓԲԸ-ում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- մասնակի վերանորոգվել են սենյակները,
- փոխվել են պատուհաններ,
- ձեռք է բերվել գույք:

Պետպատվերի շրջանակներում վարչական շրջանի **18** բնակչի տրամադրվել են անվճար բուժօգնության միջնորդագրեր:


















Նորք-Մարաշ վարչական շրջանի 4 մանկապարտեզներում անվճար հիմունքներով սովորում է 398 երեխա:







Վարչական շրջանի «Ռ. Անդրեասյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ հաճախում է **150** երեխա:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

Կազմակերպվել է մշակութային 22 միջոցառում






ՍՊՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

«Նորք-Մարաշի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ է հաճախում **250** երեխա՝ **6** մարզաճներում:






Վարչական շրջանում կազմակերպվել է **26** սպորտային միջոցառում, մարզական բաց առաջնություններ, ներհամայնքային մրցումներ, ընկերական հանդիպումներ, բակային առաջնություններ: Կառուցվել է նաև շախմատի դպրոց:





Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի աշխատակազմի և ՀՀ Ստեփանակերտ քաղաքի միջև բարեկամության և համագործակցության ծրագրերի շրջանակներում աշխատակազմերի միջև տեղի են ունեցել երկկողմ հանդիպումներ՝ փորձի փոխանակման, սոցիալական և մշակութային համատեղ ծրագրերի և միջոցառումների իրականացման համար:

Համագործակցության ծրագրի շրջանակներում ՀՀ Ստեփանակերտ քաղաքի **11** զոհված ազատամարտիկների ընտանիքների երեխաներ մկրտություն են ստացել Նորք-Մարաշի Սբ Աստվածածին եկեղեցում:













Նորք-Մարաշ վարչական շրջանի և ՀՀ Տավուշի մարզի Տավուշ գյուղի գյուղապետարանի աշխատակազմերի միջև համագործակցության ծրագրի շրջանակներում գյուղի 40 սոցիալապես անապահով ընտանիքների դպրոցահասակ երեխաներին նվիրաբերվել են դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ:

2016
ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Թեժ գիծ՝

+(374 11) 518-718
norq_marash@yerevan.am



www.yerevan.am